ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղը հայտարարում է մրցույթ ֆինանսատնտեսական բաժնի պետ-գլխավոր հաշվապահի թափուր հաստիքի համար:

Պահանջվող որակավորումներն են՝

1. Բարձրագույն կրթություն,
2. Իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,
3. Տրամաբանելու, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն,
4. Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու կարողություն,
5. Նախաձեռնողականություն,
6. Թիմում աշխատելու ճկունություն,

ֆինանսատնտեսական բաժնի պետ-գլխավոր հաշվապահը՝

1. Կազմակերպում և վերահսկում է բուհի աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշվի, ֆինանսական պարտականությունների կատարման ժամանակացույցի կազմման աշխատանքները,
2. Կազմակերպում է տվյալ տարվա բյուջեի նախահաշիվների, ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցերի կազման և ճշտման աշխատանքները,
3. Ապահովում է բուհի նյութատեխնիկական բազան
4. Ապահովում ու վերահսկում է բուհի շենքի ու տարածքի մաքրման աշխատանքների իրականացումը
5. Ապահովում և վերահսկում է բուհի ընդհանուր տարածքի արժեքների, շրջակա միջավայրի, անվտանգության, հակահրդեհային, էլեկտրական և ջեռուցման համակարգի հետ կապված աշխատանքների անխափան իրականացումը,
6. Վերահսկում է նյութատեխնիկական արժեքների բաշխման աշխատանքները,
7. Կազմակերպում և վերահսկում է տարեկան եռամսյակային ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունները,
8. Կազմակերպում է բյուջեով նախատեսված ծրագրերի հաշվապահական հաշվառումը, ֆինանսական հաշվետվությունների կազմումը և ներկայացումը լիազոր մարմիներին,
9. Կազմակերպում է աշխատակիցների աշխատավարձերի վճարումը,
10. Կազմակերպում է աշխատակազմի հաստիքացուցակի կազմման աշխատանքները,
11. Ապահովում է ֆինանսների ժամանակին տրամադրումն ու ճշգրիտ բաշխումը
12. Վերահսկում ու վերլուծում է ամսեկան դրամական հոսքերը,

13. Կազմում և ներկայացնում է համալսարանի անհրաժեշտ գույքի , կենցաղային տեխնիկայի, այլ ապրանքների տարեկան պահանջարկը:

Ցանկացողները կարող են մինչև հոկտեմբերի 9-ը, իրենց CV-ներն ուղարկել **hr.asuegb@gmail.com** հասցեին՝ վերնագրի մասում նշելով՝ ֆինանսատնտեսական բաժնի պետ-գլխավոր հաշվապահ: